Արձանագրություն N 2

ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 19/16 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի տրանսֆորմատորային, տուրբինային յուղերի լրիվ և քրոմատոգրաֆիկ վերլուծության աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի
Հայտերի բացման

ք. Երևան 11 հուլիսի 2016թ. ժ. 11:00

Մասնակցում էին՝

Ա. Ղուալմյանը - Էլ. Արտադրամասի պետ
Ա. Չոբանյանը - Գլխավոր հաշվապահի տեղակալ
Ա. Պետրոսյանը - ՊԲ-ի առաջատար մասնագետ (քարտուղար)

Նիստի օրակարգը

1.ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 19/16 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին:

2. Հրավեր ներկայացրած մասնակցի գրաված տեղի և մասնակցից համաձայն հրավերի պահանջվող փոստաթղթերի մասին:

3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի տրանսֆորմատորային, տուրբինային յուղերի լրիվ և քրոմատոգրաֆիկ վերլուծության աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հարց 1.ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 19/16 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին՝

1.1. Հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝

- «Էներգակարգաբերում» ՓԲԸ – (հասցեն՝ ք. Երևան, Այգեձորի 67),

1.2. «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ն հայտը ներկայացրել է փակ ծրարի մեջ, ծրարի վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտերի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն, հեռախոսը:

1.3. «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, Տուժանքի մասին համաձայնությունը և վճարման պահանջագիրը:

1.4. Համաձայն հրավերի ներկայացվել է հրավերի փաստաթղթերի մեկ բնօրինակ, մեկ պատճեն:

1.5. Հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի գնային առաջարկը հետևյալն է՝ 3 099 138(երեք

միլիոն մեկ իննսունինը հազար մեկ հարյուր երեսունութ) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ-ն:

Հարց 2. Հրավեր ներկայացրած հայտերի և մասնակիցների զբաղված տեղերի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

2.1. Ներկայացված հայտի հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվել «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ն:

2.2 Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

- Սույն նիստին հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՝ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցումը:
- Սույն նիստի հաջորդ օրը www.gnumner.am կայքում հրապարակել հայտի բացման նիստի արձանագրությունը:
- Ծանուցել առաջին տեղ զբաղված մասնակիցին՝ «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ին, ՀՀ կառավարության 2015 թ-ի հունվարի 30-ի թիվ 105-ն որոշմանը կից հավելվածի (գնման գործընթացի կարգի) 47-րդ կետի 2-րդ ենթակետի համապատասխան երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հրավերով սահմանված թիվ 5 հավելվածը :

Հարց 3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՅ թիվ 1 էներգաբլոկի տրանսֆորմատորային, տուրբինային յուղերի լրիվ և քրոմատոգրաֆիկ վերլուծության աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

1.1. Սույն արձանագրության 2-րդ կետով պահանջվող փաստաթղթերը մասնակցից և ՀՀ ֆինանսների նախարարությունից հարցումն ստանալու օրվան հաջորդող օրը հանձնաժողովի անդամներին տրամադրել գնահատման թերթիկների երկուական օրինակ:

1.2. Հանձնաժողի անդամներից գնահատման թերթիկները ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել և հրավիրել գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

Հանձնաժողովի

Անդամներ՝ Ա. Ղոսալմյան

Ա. Չոբանյան

Քարտուղար՝ Ա. Պետրոսյան